

Անբախտ սոխակը սրգաց ու լացեց,  
Արեան արտասուք աչքերից ժամփեց. —  
«Ո՞վ իմ, ասաց նա, քաղցրիկ վարդենի,  
• Եւ քեզ աշխարհում չեմ կարող տեսնի,  
• Թրաչում եմ եւ ես՝  
• Ենչ աեղ որ գու ես» :

Քաղցրախօս սոխակ, դու լաց վարդենիդ,  
Ես եւ շարունակ ողբամ երկուսիդ.  
Առանց սիրելիացդ Եւ ի՞նչ պարտիզպան,  
Երբ զոյզ, մի տարում, մտաք գերեզման.  
«Վարսենիկ, Միհրան».  
Միշտ պիտի ողբամ.

Գլուխար ներսէս Մատթևոսունէսն:

Ա. ԵՀԿԻ-ՔՆԻ ՊՐՈՊՐԱԼԵՐ.

### ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Մայիսի 30ին Ա. Կաթուղիկէ էջմիածնի տօնը փառաւոր կերպով տօնուեցաւ Մայր Աթոռոյս մէջ. Ա. Պատարագին Ազգիս Վեհափառ Հայրապետը Եկեղեցի իջաւ, ուր եւ ներկայ էր ցվերջ Ա. Պատարագի:

Առաւոտեան ժամերգութեան աւարտմանէն Չժամ անցած, այն է ժամը 9ին, Վեհարանի առաջ ի ներկայութեան Ա. Հայրապետի Միաբանական Աւատը Մաղթանք կատարեց, յարում էին Գէորգեան ձեմարտնի ուսանողք եւ Վաղարշապատի երկուու դպրոցաց աշակերտք եւ աշակերտուհիք, ուսուցիչք եւ ուսուցչուհիք եւ բազմաթիւ ժողովուրդք. Մաղթանքի ժամանակ ձեմարտնի սանունց կողմանէ ճառ կարդացուեցաւ. մաղթանքից յիսոյ Միաբանական Աւատը եւ ամեն ներկայ գտնուողները մատեան ի համբոյր Ա. Աջոյ Վեհափառ Հայրապետի եւ արժանացան Նորին Հայրապետական սրբութեան օրհնութեանը. Կէս օրին վայելու Հացկերոյթներ եղան թէ Միաբանից եւ թէ ձեմարտնից

սեղանատանը, եւ խօսուեցան ճառեր եւ երգուեցան աղքային երգեր:

Նոյն երեկոյեան կատարուեցաւ լուսավառութիւն եւ հրախազութիւն ձեմարանի սանունց երգեցիկ խումբը ազգային երգերով կմխիթարէր բաղմաթիւ ժողովրդեան մինչեւ գիշերուան ժամը 9 լ:

ԱՀԱ ՎԵՀԱՀԱՐԱՆՈՒՄ կարգացուած ճառը:

ԱՅՀԱ ԱՓԱԽ ՏԵՐ:

Քանի վեհ և քանի՝ պայծառ ծագէ սյսօր մեղ արև, յորում ամենապյն Ռւխտ սրբոյ եկեղեցւոյ խառն ընդ բազմութեան ժողովրդեանն համագումար խմբի առ ոտս Վեհափառ Հօրդ՝ տօնել յիշատակաւ զնաւակատիս Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի, որոյ հնգետասան դարուք յառաջ յետ արիական նահատակութեանց մեծին Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց, և Քրիստոսազօր յաղթանակին նորա, ելիցն ասեմ ի վիրապէն, և գարձին Հայաստանեայց առհասարակ յորդեգրութիւն Սրբոյ Երրորդութեանն եղաւ հիմն և կատարեցաւ շինուածն ի վերակացութեան նորին իսկ Լուսաւորչին Գրիգորի, որ նոյն իսկ սքանչելիք էր ամենեցուն ի պաշտաման իւրում յուսուցանելն զժողովուրդն և ի սրբել Ռւխտ ժողովեալ խոնհեալ բազմութեան Հայոց գրոհին՝ յելիցն արեգական և ի մտից, ի հարաւոյ և հիւսիսոյ, նախարարեանն ամենապահնին իւրաքանչիւր, ազատն և սոսկական, և երիտասարդն ամենապահն եկեղեալ հասեալ ծփային յԵրարատ դաշտ ի տեսիլ շինուածոյն հրաշալւոյ, և ի լուր բանից և խրատուց ամենեցուն Հօր պանչելոյն Գրիգորի, որոյ և ոչ բան մի ի բանիցն անկանէր ի բաց, այլ ամենապյն թափ ընդ լսելիս ամենեցուն ներդործեալ, զամենեսին ի մի միայն եկեղեցի ճշմարտին Աստուծոյ և տաճար Հոգւոյն Սրբոյ վերընծայէր, միացուցեալ զնոսա ընդ կամարօքն Սրբոյ Էջմիածնի՝ Մայր եկեղեցւոյ Հայաստանեայցո, Զորոյ զյիշատակ նաւակատեացն ամըստ ամէ կատարեալ նոր սերնդեանն, դարուց ի դարս շարունակեցին և շարունակեն մինչև յայտօր:

Այս, մեծ է տօնս և նուիրական է յիշատակ նաւակատեաց Տանս այսորիկ, որ կանգնեցաւն իւրեւ արձան կենդանի ի վկայութիւն հոգեոր միութեան Թորդոմեան աղինս. որ և սքանչելի եղեւ ի մայրութեան իւրում ի կատարելն զպաշտօն, զոր ստանձնեաց, հանապաշ հայթայթելով զհոգեօր պիտոյս և ջամբելով զանստերիւր հաւատոյս մերոյ զկաթն՝ սիրելի զաւակաց իւրոց վայրավատին ցրուելոց ի սփիւռ աշխարհի, որում վկայք են և ամենայն մնացորդք պատմութեան աշխարհի, որում վկայք են և ամենայն մնացորդք պատմութեան աղգիս մերդոյ Զի յամենայն կողմանց խուժեցին ի վերայ զինչ գազանացեալ ալիք մըրկեալ ծովու Հըսուակի բարբարոս մարդկան և Առ ան-

սասան կացեալ տակաւին դեպուղիղ շարունակէ զընթացս իւր ի նաւահանգիստն խաղաղութեան, Պատառեցաւ երբեմն առագաստն, բայց ոչ բեկաւ կայմն, Եւ գեռ որպէս յանքոյթս և յապահովի գտանին, որք միանգամ ապաւինեալքն են ի յարկս Սորա, Եւ ոչ ոք՝ որ սակաւ ինչ տեղեակ իցէ պատմութեանս Հայոց, ոչ կարէ ուրանալթէ՝ զգոյութիւն մեր և զպարծանս և բովանդակ իսկ ասել՝ զամենայն ինչ, զոր ունիմք պյսօր, որովք և դասիմքս ի կարգս ազգաց՝ պարտիմք հովանաւորութեան և խնամոց Սորա, Հրաշից իմն է զօրութիւն Սորա, որ անդիմադրելի ամենեցուն՝ յինքն ձգէ զսիրաս ամենայն Հայկազանց, որոց մոռացեալ ի տեղիս տեղիս ի պատճառս ազգի ազգի հանգամանաց զպատմութիւն իւրեանց՝ և մինչև իսկ զմայրենի լեզուն, տակաւին վառ ի միտս իւրեանց ունին զճրագլուսոյ նորին հնչել միշտ — Էջմիածին. Այս՝ նուիրական են քարինքս իսկ Սրբոյ Տաճարիս և լիցին առյապյն ազգացյազգս, ցորչափ բարախի Հայ սիրտ ամենայն ուրեք ընդ ուորաս աշխարհի, Եւ եթէ զտանիցին երբեք ապերախտք, որ յանդրդնիցին ազարտել զփառս Սորա, ոչ յաջողեսցի և ոչ երբեք.

Եւ արդ, Վեհափառ Տէր, մեք հոգեոր որդիք Սրբոյ Էջմիածնի և Գահակալիդ նորուն, բերելով երախտագիտութիւն ի սիրտ՝ մատուցանեմք Զերումդ Վեհափառութեան յաւուր յիշատակի նաւակատեացս Սրբոյ Էջմիածնի, ի փոխարէն այնքան բարերարութեանցն, որովք գեղեցիկ իմն բարեզարդեցէք զՍա, որպէս ի հնումն վեհ նախնիք մեր՝ յաջորդք Ս. Գրիգորի:

Եւ արդ ինդրեմք զհոգեոր օրհնութիւն Զեր առ ի լինել մեզ արժանաւոր որդիս Հոգեոր Մօրս մերոյ Սրբոյ Էջմիածնի և առաւել քառաւել զուն գործել ի պայծառութիւն Սորին յամս ամաց:

Խ Դէմոց Համարէն ուսիւբուց Գէմբէ. Ճեմ. Համարէն Ա. Լուրիանէ

ԱԱՐԿԻԾ ԴԱՒԼԵՒ ԽԱՌԱՎԵԼՈՒ ԽԱՐԱՎԵԼՈՒ

Ազգիս Վեհափառ Հայրապետ ի 10ն ամսոյս բարեհաճեցաւ գնալ Իւրեականի ամարայնոցը օդափոխութեան և Իւր անձնական վիճակը կազդուրելոյ համար:

Ի նպաստ շինութեան զանգակատան նորաշէն Եկեղեցւոյ, որ յանուն Ս. Մեսրովպայ յօշական՝ մեր բարեպաշտ Հայ ազգայինք Գանձակ քաղքի և քսան և մի գիւղօրէից վիճակին ի ձեռն Արժ. Թագէոս վարդապետի հանգանակեցին իւրեանց մէջ հնիք հոբիու ուստի Էշիս բութիւն և հնիք հոբիու ուստի է հնիք իւղէի, որոյ մասին մատուցանումնեք հրապարակական շնորհակալութիւն:

\* \*

Տաւալուեցի Պ. Սամսոն Տէր Իսահակեան, Երեանցի Պ. Ցովչաննէսն Յարութիւնեան և Վաղարշապատցի Պ. Պետրոս տէր Պետրոսեան յօ-

գուտ Մայր Աթոռոցյս Գէորգեան Ճեմարանի մատենագարանին Նուիրեցին իւրաքանչիւրն ուն և հինգ-վեց բարձր որոյ վասն շնորհակալութիւն կյայտնեմք յիշեալ պարոնադից:

\* \* \*

Սուրմառի գաւառակի Խալֆալու գիւղացի բարեպաշտ Պ. Գրիգոր Գաւթեան Նուիրեց Մայր Աթոռոցյս Գէորգեան Ճեմարանին ուն և հինգ-վեց որպիսին Նուերը խոստանումէ ամ ըստ ամէ շարունակել մինչև իւր մահը:

Գովեստից և շնորհակալութեան արժանիի է յիշեալ բարեպաշտ ազգային մեր Ապրի:

\* \* \*

Գուշեթեցի Աղէքսանդր Քահանայն տէր Յովհաննիսեանց Նուիրելով յօդուտ Մայր Աթոռոցյս Գէորգեան Ճեմարանի ուն բարձր որպիսին Նուերը ամ ըստ ամէ շարունակել մինչև իւր կենաց վախճանը Բարեկրօն Քահանային կյայտնեմք շնորհակալութիւն:

\* \* \*

ԱԼԻ — ՊԱՄԵՐԼՈՒԻՑ Պ. Սուրմալուեցին գրումէ մեզ, « Ապրիլի 7 ին Ալի — Պամերլու գիւղի հայ Հասարակութիւնը կատարեց իւր երկսեռ դպրոցաց հիմնարկութեան հանդէսը Հանդիսականաց բաշմութիւնը մեծ էր և նոցա ոգեորութիւնը Նկատելի: Նկեղեցական դասն հիմնօրհնունութեան հանդէսը կատարելուց յետոյ գաւառակիս գործակալ բարեկրօն Սիմեօն Քահանայն ազդու և Հասկանելի խօսքերով բացատրեց Հասարակութեան ուսման և ուսումնարանների վեհ Նշանակութիւնը ու կարեորութիւնը, որին յաջորդեց Թաղէոս անուն պատանւոյ գեղեցիկ Ճառախօսութիւնը նոյնպէս ուսման և դաստիարակութեան մասին:

Ճինութիւնը բաւական ընդարձակ է և բազկացած է ութ սենեակներից:

Այս ազգաշահ Ճեռնարկութեան մէջ գլխաւոր գործողն ու շարժառիթըն է նոյն գիւղացի Պ. Ա. Մելիք — Վրթանէսեանը: Դպրոցը ստացաւ Ա-Ե-Վ-Ե-Ա անունը ի յիշատակ հիմնարկութեան աւուր տօնի Աւետեաց Ա. Աստուածածնի:

\* \* \*

ԸԱՄԵԼՈՒԻՑ Պ. Ճիրուանցին գրումէ: Մեր մանուկները զրկւումեն իսպառ ժամանակայարմար ուսումից ժողովրդի դէպի երկսեռ ուսումնարանները սառնասրտութեամբ վերաբերվելու պատճառաւ: Բայց ժողովուրդը շատ իրաւունք ունի սառնասրտութեամբ վերաբերվելու դէպ յիշեալ ուսումնարանները, քանի որ ակներեւ տեսնումէ, որ իրանից կոպէկ կոպէկ հաւաքածները ուտում են ոմանք անբարեխիղճ անհատներ և հոգաբարձութիւնը տեսնումէ այս և մնումէ անտարբեր, որովհետեւ այն անհատներից մի քանիքը ևս իրանցից են:

Այսօրուան օրս մեր աղքատ թեմ. գպրանցը սորա, նորա վերայ 1876—77ից անշահ մնացած 500—1000 բուրբի ուսումնարանական գումար ունի, որոց ստացման մասին բոլորովին անհոգ է ներկայ Հռաբարձութիւնը. Սորա պատճառը և այդ պարտականների անունները յետոյ կզրեմ:

Այժմ Հոգաբարձուքը պատրաստի գումար են ծախսում և պատրաստի գումարի են ձեռք ձգում, պարտքերը ժողովելում և նորանոր աղբիւրներ գտնելում բոլորովին անհոգ.

Տեղոյս օրիորդական գպրոցի մասին բաւական է ասել, որ նախկին Հոգաբարձուք իշտոյէ 11 տարի շօշափելի արդիւնաւորութեամբ և յառաջազիմութեամբ նոյն գպրոցը պահպանելուց յետոյ՝ նշանաւոր գումարներ յանձնեցին կայՀոգաբարձուաց, գպրոցի նոր շինութեան հիմնարկութիւնը սկսեցին մեծ գժուարութեամբ. Խոկ նորա կոյր նախանձի զոհուելուց յետոյ՝ ներկայիր իւրեան ցանհոգութեամբ հետ զհետէ յետագիմութեան մասնեցին գպրոցը մինչև անգոյս թեամբ հասուցին նրան. Վեհափառ Հայրապետի հաստատած կանոնագրութեան համեմատ ընկերութիւնից անձեռնմխելի համարուած մայր գումարից 200—300 ր. ևս ծախսեցին հակառակ անփոփիս Անդամների կամաց. խոկ Դպրոցի նոր շինութեան հիմնարկութիւնը ևս փոխանակ բարձրանալու՝ անձրեների աղղեցութիւնից հետ զհետէ ցածրանալու վերայ է. Այժմ Հոգաբարձութիւնը անձար մնացած Եկեղեցեաց պատրաստի գումարներին է աչք գնում, Եկեղեցեաց՝ որոնք առանց դորան էլ հազար ումի պէտքեր ունին և իւրեանց անշբութեամբ և աղքատութեամբ գիւղական Եկեղեցեաց են նմանում.

Լսումնք, որ մօտ օրերս այս գպրոցի ընկերութիւնը մի հանրագրով կամենումէ գիմել Բագուայ Մարդասիրական ընկերութեան՝ նորանից իւրեանց գպրոցին օժանդակութիւն խնդրելու համար.

\* \*

ԱԽԱԼՑԽԱՅՑ Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանցը խմբագրութեանս ուղղեալ գրութեան միջոցաւ հրապարակական շնորհակալութիւն է յայտնում պ. Եղիշէ վարժապետ Մեծատունեանցին առ այն՝ որ նա—պ. Մեծատունեանցը կարողացել է իւր գեղերովն բժշկել իւր ամենահաւատարիմ ծառայ Սիմեօն Շահինեանցի Խուտերու, որի մասին թէ տեղական զօրաց բժշկապետը և թէ Տիֆիսու բժիշկները վկայել էին իբրև անբժշկելի, կրելով իւր մէջ ( որոք սերդա — պօրօկ սերտցա ) հիւանդութիւնը. Միւնցու ժամանակ Գեր. Արքեպիսկոպոսը մազթումէ յաջողութիւն նորա բժշկական վսեմ ձեռնարկութեանը.

\* \*

Մայր Աթոռոյս Տպարանական ժողովը յարգելով Արքունի գործակալ Տփխսիսեցի Պալի - գալֆայեան բարեկրօն Պաղար աւագ քահանայի Խոհիրը՝ արձակեց նորան Արքունիս գործակալութեան պաշտօնէն և նո-

րա տեղ նշանակեց Խօջաէնիաթեան Բարեկ. Թագեռս քահանային, ու աղջնոյն յայտնելով հրապարակական շնորհակալութիւն իւր բազմամեայ արդիւնաւոր ծառայութեան համար, իսկ երկրորդին ցանկալով յաջողութիւն և ջերմեռանդութիւն իւր գործունեաւթեան ասպարիզում:

\* \*

Տփիսու Բարեգործական Ընկերութեան մեծարգոյ Ընդամները իւր եանց առանձին գրութեամբ գիմելով Վզգիս Ա. Ե. Հայրապետին՝ Խընդրեցին Նորա Հայրապետական խնամակալութիւն։ Նորին Ա. Ե. Հավառութիւնը ամենաքաղցր հաճութեամբ սրտի ընդունելով միշեալ ազգօգուտ ընկերութեան խնդիրը՝ ի նպաստ և յարդիւնաւորութիւն ջանից ընկերութեան՝ բարեհաճեցաւ միջոցաւ Ս. Սինօդին պատուիրել ամենայն Ա. Ի. Ճակապին Առենից Հայոց Ուռւսաստանի թողլատրել ընկերութեանը ամենայն եկեղեցիներում, ուր յարմար ու պատշաճ կհամարին, ունենալ գանձանակագրամոց առանձին արկդ իւր կնքով և կարգադրութեամբ ապահովուած։

### ՅՈՒՆԴՐՈՒԹԵՆՔ ՍԻՆՕԴԻ.

Ի 29 Յունվարի 1882 ամի. Որովհետեւ Յովհաննէս քահանայն Ա. Աստակեան Համեստ գեղջ կողմանցն Ղարսայ առանց սուուցելոյ օրինաւոր կարգաւ զարամիք եւ ամուրի գոյն Ալէքսանդրապոլցի Մինասայ Սոնեփաննեանց՝ առ կեն գանութեամբ առաջին կոչչն կատարեալ է զարուինի պսակ նորա ընդ Արդույնցի Աննոյի Զիթապահովիանց, վատնորոյ դադարեցուցանիէ զնա ի քահանայացործութինէ անորոշ ժամանակաւ եւ առաքել յապաշխարութիւն ի վանս Անւոյ ընդ հսկողութեամբ զանահօրն։ Եւ զբակովք քահանայն Պապիկեանց, որ ի ժամ կատարման պսակի կատարեալ է զպաշտօն գպրի՝ հնթարկել ապաշխարանաց առ դրան եկեղեցւոյ, որոյ միարան է, առանց փիլօնի ընդ հսկողութեամբ աւադ քահանայի տեղւոյն՝ զերիս քառասուն աւուրս սադմոս ի ծեռին ընթեռնուէ ի ժամերգութեան պահու։ Կակ զպակն լուծեալ հրատարակել։

Ի 24 Փետրվարի 1882 ամի. Որովհետեւ ուսուցիչն հին Խրիմու Տփիսու Տփիսու Վաղարշակ Բէլլուբէկեանց զնուիրադրամն հանդանակեալս իւր եւ յԱղջայնոց տեղւոյն ի նպաստ սովելոց Հայոց Տաճկաստանի՝ գործադրեալ է՝ ոչ ըստ նպատակին, այլ յօդուու իւր զպարար վասնորոյ Ս. Սինօդն Հըամայեց զանհարազատ նա. զիսարդափամիտ գործադրութինէ յիշեալ Վաղարշակայ Բէլլուբէկեանց ծամուցանել համայն Վիճակային Ատենից Հայոց եւ Հոգ. Կառավարութեանց, պատուիրել նոցին, արգելով նուս մոանել յոր եւ իցէ պաշտօն ի զպրոցս կամ յայլ Հոգիւոր հաստատութիւնս զոտանեցեալս ընդ տեսչութեամբ իւրեանց եւ զիսարդափամութենէ նորա հրատարակել ի զիտութիւն ամենից միջոցաւ Աբ-բ-ա ամսագրոյս։